

Խաւարումն արեգական մեծապէս զարմացուցանէ քան լուսնի: քանզի սոքա բազմիցս սմա լինին:

Կապտեբանգ արեգակն նախագուշակէ զանձրեւ ի հրայինն Եւրոս:

Ի քանի մի սահմանս արեգակն ամսով չափ անընդհատ ո՛չ տեսանի:

Զարեգակն Պարսիկք ընդունին եւ հաւատան լինել մինն յաստուածոց:

Ի գարնան: որ գերապանծն է յեղանակս տարւոյ: ողջոյն բնութիւն մերձաւորի առ ջերմութիւն արեգական: իբրութէ վերստին կենդանանան ծառք յանտառս եւ յայգիս: եւ բոյսք եւ ծաղիկք ի մարգս ի դաշտս եւ ի հովիտս կանչանան:

Յամարան: մինչ արեգակն ընդ երկար ի մէջ երկնի տեսանի եւ ճառագայթիւք իւրովք մերձ երկրի լուսաւորէ եւ ի խոր թափանձէ: պտղաբեր ծառոց պտուղք եւ հունձք հասունանան:

Յաշնան: հասունացեալ պտուղք ծառոց կթին: հունձք հնձին եւ յըշտեմարանս ժողովին: ի ժամանակի այսմիկ հուսկուրեմն տերեւք անկոց թօթափին:

Ի ձմերան: որովհետեւ՝ վաղուրեմն առ ի մէնջ արեգականն ճառագայթք հեռացեալ յերկիր թիւրապէս արձակեն: եւ ինքեանց ունին զնուազ ճաճանչ ջեռուցանելոյ: անձրեւք ի կարկուտ եւ ի ձիւն: ջուրք ի կարի կարծր սառոյցս փոխարկին:

Որպէս լուսին՝ նմանապէս եւ երկիր են մարմին անլոյս կամ խաւարին: եւ զլոյս իւր յարեգականէ առնու: զոր տայ եւ երկրի զգիշերաւն: բայց զսակաւ ունի զջերմութիւն:

Լուսին զզանազան փոփոխութիւնս լուսոյ կրէ: երբեմն աճելոյ եւ երբեմն նուազելոյ ունի զսովորութիւն:

Լուսինն որքան մերձ է արեգական՝ ինքեան զսակաւ ունի զլոյս:

Նորոգապէս լուսինն աճէ ի լրութիւն եւ ապա կրկին ի նորոգ լուսնոյ նուազի:

Աստեղք կարի փոքր երեւին մեզ: ո՛չ այլ ինչ պատճառաւ՝ եթէ ո՛չ զի նոքա կարի մեծ տարածութեամբ ի մէնջ հեռի են:

Այն: որ ասի երեւակ աստղ (saturnus) որ բարձրագոյն գտանի յերկրէ՝ յերեսուն ամս զշրջան իւր կատարէ:

Զաստեղս: զորս Յոյնք Մոլորակք: Հրուովմայեցիք Գիսաւոր անուանեն:

Մոլորակք կարի նուազ երեւին: որոց բնութիւնք սակաւ յայտնի են մեզ:

Մոլորակք շուրջ զհիւսիսիւ ի մեծագոյն բազմութեան երեւին:

Զբազում մոլորակս ո՛չ տեսանեմք: որք ծածկին ի ճառագայթից արեգական:

Մոլորակք շուրջ զարեգակամբ շարժին եւ ո՛չ տեղիք նոցա հանապազորդ տեսանին: ուստի եւ Մոլորականք անուանին:

(Ի յեղեղոյ)

ՄՆԳՒԲԸ ՅԻԻՄԷՆ ՊԵՏԻԺԸ ԿԳՏՆԷ:

Մեղքը՝ որ աշխարհի կարգն ու կանոնը տակն ու վերայ կրնէ, նախ և առաջ նոյն իսկ գործողին մէջ անկարգութիւնը կսերմանէ: Արէժիւնդրութիւն, որ ամե-

նայն բան քանդելու համար մարդոյ սըր-
տէն դուրս կթուչի, միշտ իւր առաջի հա-
րուածը և ամենէն աւելի մահացուցիչը
զինքը արտադրող ու սնուցանող սրտին
կիջեցընէ: Անիրաւութիւնը, որ ուրիշին
ապրանքը կուզէ վայելել, իւր ներգոր-
ծութիւնը նախ իւր գործողին վերայ կը-
դրոշմէ, թափուր թողլով զինքը ամենա-
մեծ բարութիւնէ, որ է արգարութիւնը և
այն դեռ ևս ինքնին ուրիշին բարիքը չյա-
վըշտակած: Չարախօսը ուրիշին համբա-
ւը կարատաւորէ, բայց իւր իսկ առաքի-
նութիւնը կը թշնամանէ:

Անպարկեշտութիւնը, որ ամենայն բան
կուզէ եղծանել, իւր ազդեցութիւնը կըս-
կսի իրեն եղած աղբիւրէն. վասն զի մէկը
չկրնար ուրիշին անարատութեանը փնա-
սել առանց իւր անարատութիւնը կորու-
սանելու: Աւստի՛ ամենայն ախտասէր իւր
անձին թշնամին է, եղծիչ և ապականիչ
ըստ սեփհական խղճի մտաց իւր ամենա-
մեծ բարութեան բանաւոր դատողու-
թիւն, որ է անմեղութիւնը: Աստի կհե-
տևի, որ մեղքը ըստ ինքեան չարութեանց
ամենամեծն է ու ծայրագոյնը՝ անհամե-
մատ աւելի մեծ արտաքուստ մեղ սպառ-
նացող չարիքներէն. ըստ որում ներքին
անկարգութիւն է այն և ապականութիւն,
աւելի մեծ և վտանգաւոր քան մարմնոյ
ամենէն մահաբեր հիւանդութիւնները,
վասն զի օրհասական թոյն է այն հոգւոյ
կենդանութեան, աւելի մեծ մեր միտքը
հարուածող չարիքներէն՝ քանի որ մեր
խիղճը ապականող չարիք է այն՝ հետևա-
բար աւելի մեծ դատողութեան կորուս-
տէն, վասն զի դատողութիւնը կորսըն-
ցնելէն շատ աւելի փնասակար է չզիտ-

նայը զայն ի բարին գործածելու, իսկ ա-
ռանց բարւոյ նոյն իսկ դատողութիւնը
պատժապարտ անզգամութիւն է: Աւեր-
ջապէս կնքելու համար այս խորհրդա-
ծութիւնը ասենք, որ մեղքը ամենայն
չարիքներէ մեծ ու թշուառութիւններէ
գերազանց է, վասն զի նորա մէջ ամենայն
բան կգտնուի, թէ՛ թշուառութիւն և թէ՛
յանցանք. թշուառութիւն մի՛ որ մեր
վերայ կծանրանայ, և յանցանք՝ որ զմեզ
կանարգէ, դժբաղդութիւն մը՝ որ յուսա-
հատութեան մէջ կզդորէ և յանցանք՝ որ
թողութիւն ընդունելու անյոյս կթողու,
դժբաղդութիւն մի՛ որ մեզ ամենայն բան
կորսնցնել կուտայ, և մեղք՝ որ զմեզ յան-
ցաւոր կդատի այդ ձախողակի կորստեան
համար և պատճառ անգամ չթողուր
արտնջելու:

Ապա ուրեմն, քրիստոնէսայք, պէտք չէ
զարմանալ՝ որ մեզ յաճախ կքարոզեն թէ
մեր մեղքը մեր պատիժն է: Աշուս իրա-
ւամբ ասած էի՛ թէ մեզի հարուածող
Պայենը՝ նոյն իսկ մեր մեղքն է, վասն զի ի
հանդերձելումն մեր տանջանաց գլխաւոր
գործին՝ մեր իսկ մեղքը պիտի լինի: «Աշ-
տրեց Դէ՛ յանդիման զամենայն Գարշէլիան
Յեր, և եղէցին է Դ՛՛ Յերոմ Գարշէլիան Յեր, և
Երեց է Դէրոյ Յեր զԲեռնիս ամենայն շարո-
նեանց Յերոյ»: Ահա այս է ճշմարտ տան-
ջանքը, որով մարդ զգածուած և պաշա-
րուած լինի իւր յանցանքներովը:

Աշ յիրաւի, կրսէ, սուրբն Օգոստինոս,
պէտք չէ կարծել թէ Աստուծոյ այս ան-
սահման լոյսն ու արքայական գթութիւնը
յիւրմէ կըղխի կամ իւր ծոցէն կհանէ մե-
ղաւորաց պատժելու գործին: Ո՛չ. Աս-
տուած ամենաբարի էակ է, և միայն բա-

ըին մարդոյ կմատակարարէ. ուստի իւր
 թշնամիները կործանելու զէնք գանելու
 համար՝ նա անոնց մեղքերը ի գործ պիտի
 դնէ:

Մի հարցընէք ինձ, քրիստոնեայք, թէ
 ինչպէս պիտի լինի այս մեծ փոփոխու-
 թիւնը զուարճութեան ի տանջանս: Ս.
 Գիբբը զայն հաստատած է: Բանն Աս-
 տուած զայն ասած է, և Ամենակարող
 Աստուած պիտի տնօրինէ: Աւելի է աշ-
 խատիք ձեր կատարած ցանկութեանց
 տեսակները քննել, զիւրաւ կրնաք հաս-
 կանալ թէ ինչպէս կարող են անոնք ան-
 տանելի տանջանքներու փոխարկուիլ: Այն
 բոլոր զուարճութիւնները կարունակեն
 իւրեանց մէջ ահագին վիշտեր, զզուանք,
 և դառնութիւններ: Անոնք անչափու-
 թիւն մը ունին, որ յաւէտ չկշտանալուն
 վերայ կղայրանայ, և այս իսկ է պատճառ
 այն կատաղի և ժողգին արարմանց, որոց
 հետեանքն է միշտ դժպատեհ և տառա-
 պեցուցիչ:

Անուրբ սէրը, եթէ ինձ կներուի ա-
 նունը տալ այս սուրբ բեմիս վերայէն,
 ունի իւր վարանքն ու սաստիկ յուզմունք-
 ները, իւր երկմիտ դիտաւորութիւնները,
 դժօխային նախանձը և այլ բաներ, զորս
 հարկ չեմ համարիր ասել: Փառասիրու-
 թիւնը ունի իւր ստրկութիւնը, վարան-
 քը, կասկածներն ու երկիւղը իւր իսկ
 բարձրութեան մէջ, որ շատ անգամ իւր
 գլորուելիք անդնդոց չափն է: Ագահու-
 թեան վատ ցանկութիւնը, աշխարհի այս
 դարչելի ախտը, ոչ միայն անիրաւութիւն-
 ները կհաւաքէ, այլ նաև գանձուց հիտ
 անհանգստութիւններ կգիղկէ: Աւելի ա-
 ւելի զիւրին բան կայ բայց եթէ ընել ան-

տանելի վիշտ մը մեր մեղքերէն ու ցան-
 կութիւններէն, վերցընելով անոնցմէ այն
 դուզնաքեայ քաղցրութիւնը, որ զմեզ
 կը հրապուրէ, և թողլով այն սոսկալի
 տաղնապն ու դառնութիւնը, զորս յա-
 ւէտ կյաճախէ: Մեր մեղքերը մեր դի-
 մացն են, մեր վերան և մեր մէջը, մեր
 սիրտը հարուածող սլաքներ, մեր գլխոյ
 վերայ ծանրացող բեռինք և մեր աղիքը
 դալարող թոյներ:

(Պատիւ)

Հ Ա Յ Կ Ո Ր Գ Ի

ԱԶԳԱՅԻՆ

Ապրիլի 16/28 ամսաթուով ի Կալի-
 թայէն մեր թղթակցի նամակագրու-
 թենէն հետեւեալը քաղելով՝ արժան
 կհամարիմք հրատարակել ի տեղեկու-
 թիւն մեր սիրելի եղբարց:

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի ՊԻՐՄԱՆՍԱՆ

Յառաջ քան զգնալ մեր ի Ռանգուն
 եւ ի Մանգալէ՝ գրեալ գրութիւնք մեր
 հասեալ են առ Ձեզ, որք էին յ⁹/₂₁ Յուն-
 վարի եւ ի ¹⁶/₂₈ նորին: Ի ²⁵/₆ Փետ. մեկ-
 նեալ ի Կալիպթայէս շոգեհաւով՝ յ⁵⁰/₄₁
 Փետ. ողջամբ հասաք ի Ռանգուն. — 90
 մըն է ի Կալիպթայէ: բերան գետոյ
 ցծովն. 656 մըն է ծովն եւ 40 մըն
 գետն Ռանգունայ: բովանդակ ճանա-
 պարհն ի Կալիպթայէ ցՌանգուն 786
 մըն է: —